

# ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 րուբլի, կես տարվանը 6 րուբլի, մասնակցի կամարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ:

Մեր Կոպիտ. Типографъ, редакция «Мешакъ».  
Կամ Tiflis, Rédaction «Mschak».  
Տէլէգֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և առաջօրեայ):

Շաբաթադրութիւնը ընդունվում է ամեն լիզովով:

Շաբաթադրութիւնները կամար վճարում են իւրաքանչիւր առողատեղին 10 կոպեկ.  
Տէլէգֆօն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

## ԲՈՎԱՆԻԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Վերջին տեղեկութիւններ. — Ներքին Տնտեսութիւն. Գրքերի մի լուր. Մեր գործողների բացման առիթով. Նամակներ Բագուից. Նամակ Ալեքսանդրապոլից. Ներքին լուրեր. — ԱՐՏԱ. Բին Տնտեսութիւն. Նամակ Պարսկաստանից. — Հեռագրեր. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ. Ներքին:

## ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բագուի շրջանից ստացած ամենամիւթաբարկան լուրն այն է, որ Ձաքարթում պաշարված հայերը չորս օրվայ պաշարով և հերոսական ինքնապաշտպանութիւնից յետոյ, օգոստոսի 25-ին կարողացել են ստանալ դրանց օգնութիւն և ապագիտով ազատվել են վտանգից: Ձաքարթ է հասել զօրքի մի մասը և նպաստել յարձակվողների յետ մղման:

Պէտք է նկատել, որ Բալասանի-Սաբունչիի շրջանում մեծ դեր են կատարել տեղական երիտասարդները մինչև զօրքի գալը: Միացած ուժերով 40—50 հոգուց բաղկացած խմբեր հանում են նաւթահանքերի ամեն մի անկիւն, ժողովում այնտեղ գտնվող անպաշտպան մարդկանց և նրանց առաջնորդում դէպի նաւթարդիւնաբերողների խորհրդի հիւանդանոցի շէնութիւնը, ապահովելով թուրքերի յարձակումներից դիմադրութեամբ:

Այժմ, երբ աւերել իր բոլոր սարսափելի հետեւանքներով միլիոնների վնասներ է հասցրել Բագուի շրջանի արդիւնագործութեան, ապարդէշ են եկել մի քանի խոշոր և էական հարցեր, որոնցից մէկը ըստուրներին, գործակատարների և առհասարակ նաւթահանքերի ազգաբնակչութեան վիճակն է. երկրորդ՝ նաւթարդիւնաբերութեան գոյութեան պայմանները առաջիկայում ապահովելու հարցը:

Կարելի է կազմակերպել վնասված և անդործ մնացած ժողովրդի համար նիւթական ապահովութեան գործը թէ գործարանատէրերի, թէ նաւթարդիւնաբերական ժողովի խորհրդի, թէ քաղաքային ինքնավարութեան, թէ պետական գանձարանի և թէ մասնաւոր անձանց եռանդուն գործակցութեան միջոցներով:

Մարդիկ մնացել են առանց ապրուստի, առանց աշխատանքի աղբիւրների: Նրանց մասին հոգստարութիւնը առաջին էական հարցն է:

Նաւթարդիւնաբերութեան դրութիւնը ապահովելու հարցի մէջ կայ անյետաձգելի կողմ և կան այնպիսի կողմեր, որոնք կարող են քննութեան առնվել մի քանի օրից և շաբաթից յետոյ:

Էական նշանակութիւն ունի նաւթահանքերի պահպանութիւնը դրան յարձակվողներից, որոնք կարող են փչացնել նաւթահանքերը, գցելով այնտեղ գտնուողներին և փչացնել հորերի մօտ գտնվող մեքենաները և այն նիւթերը, որոնք ազատ են մնալու աւերից և կրակից:

Թիֆլիսում գտնվող նաւթարդիւնաբերողները օգոստոսի 25-ին ներկայացել էին Փոխարքայի օգնական գեներալ Շերինկինին և յայտնել իրանց ամենաէական կարիքների մասին: Դեռեւոր Շերինկին խոստացել է կազմակերպել նաւթահանքերի պաշտպանութեան գործը կարելիազարկ շտապօգնութիւն կերպով:

Բագուի մէջ, ինչպէս մինչև երէկ հազարդէկ էին, ինչպէս է հայերի և թուրքերի մէջ հաշտութիւն և ընդհարումը համարվում է վերջացած: Սակայն առաջիկայ օրերը ցոյց կը տան, թէ արդեօք վերջնականապէս խաղաղվել են մտքերը թէ ոչ: Հաստատուող հրացանաձուլութիւններ տեղի են ունեցել և երէկ, օգոստոսի

25-ին, բայց լուրջ ընդհարումներ տեղի չեն ունեցել:

Դէպի Բագու, յամենայն դէպս, գնացել է զօրք լրացնելու տեղական զինուորական կազմը նոր ուժերով, որպէսզի վերջնականապէս ճնշվի ապստամբութեան բնաւորութիւն ստացած յուզմունքը:

Ուրիշ շրջաններից ստացած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ երկրի լուրջ շտապ տեղերում և նախագործչութեան միջոցների կարիքը զգացվում է մեծ տարածութեան վրա: Գանձակի նահանգը դեռ չէ հանգստացել և երթնելով թիւնը կատարվում է դժուարութեամբ: Նորագոյն փաստերից հաղորդում ենք հետեւեալը:

Թարթառ կայարանի մօտ գտնվող յոյները, զգալով իրանց վտանգի մէջ, դիմել են ինքնապաշտպան, գանդաւաղներով շրջակայ թուրքերի բռնած սպանական դիրքի վրա:

Ձանգեցողի գաւառի մի քանի մասերը վտանգի մէջ են: Մենք արդէն հաղորդել էինք Մինքիւնդ, Խոջմարի և Ձէվա գիւղերին հասած աղետի մասին: Այժմ այդ գիւղերի շարքին աւելանում է և Խնդրեհի գիւղի անունը: Վերջին դէպքի մասին սպասում ենք մանրամասնութիւնների, իսկ Մինքիւնդ գիւղի անցքերը արդէն սկսում են պարզվել իրանց չափազանց տխուր գոյներով: Ներսէս վարդապետը մեզ հաղորդում է, որ ինքը անձամբ այցելել է գիւղը և ստուգել իրողութիւնները: Նրա հաղորդագրութիւնից երևում է, որ Մինքիւնդ գիւղի հայ շինականները եթերակվել են ընդհանուր կողոպտուի: Սպանվել են մասնակցներ, կանաք, տեղական քահանայ և հասակաւոր մարդիկ: Յարձակվողների թիւնը նկատվել են թուրք սելիդներ, որոնք դրօշակները ձեռքներին ուղեւորում են եղել յարձակվողներին: Մինքիւնդի մի քանի հայերին ստիպել են ընդունելու մահմեդականութիւն: Յարձակվողները եղել են Շուշու և Ջաւադի գաւառների այն թափառականները, որոնք ամառները զբոսնում են Ձանգեցողի գաւառը իրանց խաչներով և այժմ վերադառնում են եղել դէպի իրանց ձմեռոցները:

Ի դէպ պէտք է յայտնենք, որ թափառականների մեծ մասը աշխատել է այս տարի վաղ վերադառնալ իւրենցից: Սակայն կան դեռ բաւականաչափ մնացողներ էլ: Գարալագեղից մեզ հաղորդում են, որ թափառականների մնացորդներից կազմվել են աւազակային խմբեր, որոնք յարձակվում են գիւղացիների և նրանց նախնիների վրա: Թափառականները ի միջի այլոց քշել տարել են Մալիշի գիւղը 400 գլուխ ոչխար և 80 գլուխ խոշոր տաւար:

Շուշու աղետի շրջան էր գնացել, ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին, անգլիական թիթիկից Գորդոն Բրոուս: Նա երկու օր ստիպված մնացել է Ադրամում և յետոյ աջողեցրել է Շուշի մղուները: Նա ժողովել է մանրամասն տեղեկութիւններ և վերադարձել Թիֆլիս: Այժմ նա ժողովում է տեղեկութիւններ Բագուի և մեր երկրի միւս մասերում տեղի ունեցած աղետների մասին:

Վերջին տեղեկութիւնը, որ մենք ստացանք վերաբերում է Կերեքիին: Այնտեղ ևս սկսվել է յուզմունք, որ դեռ սահմանափակ ծաւալ ունի:

Ստացանք հետեւեալ հեռագրերը:

Բագու, 24 օգ., երեկոյան 6 ժամ 45 ր. (հեռագրից, չափազանց կուտակման պատճառով, երկու օրվանը ուղարկվել են պոստով):

«Երեկոյան ժամը 5-ին, խաղաղութիւնը վերականգնվեց: Խաղաղարար

յանձնաժողովը փողոցներով գնում է հանդիսաւոր թափօրով»:

Այդ հեռագրից յետոյ Բագուից մեկնած անձեր պատմում են, որ խաղաղարար թափօրների ծէսը այլ ևս ոչ ոքի վրա չէ ազդում: Մի կողմից թափօրն է եղել շրջիւս, իսկ միւս կողմից Ձէվա-Երեքեղից, Գուրի մէջոյանից և Թուրքական այլ թաղերից գէնքերն են եղել որոտալիս:

Ստացանք հետեւեալ հեռագիրը:

Բագու, 25 օգ., երեկոյան 6 ժ. 15 ր.

«Երէկ երեկոյան զօրքերը օգնութեան հասան Ձաքարթում Մանթաշեանի գործարանի պարիսպներում փակված և թուրքերով շրջապատված բոլոր քրիստոնեայ ծառայողներին և նրանց ազատելով տարան քաղաք: Գաղաթում խաղաղութիւն է տիրում մասամբ: Հրաձգութիւնը դարձել է»:

Շուշուց օգոստոսի 25-ին գիշերվայ ժամը 11-ին ստացանք հետեւեալ հեռագիրը:

Սարսափելի աղէտ եկաւ Շուշու գլուխին: Օգոստոսի 16-ին սկսվեց կատաղի գինված ընդհարում հայերի և թուրքերի մէջ, որ անընդհատ տեւեց մինչև օգոստոսի 20-ի կէսօրը: Հաշտութիւնից յետոյ պարզվեց, որ քաղաքի ամենալաւ մասը հայոց թաղում ամբողջապէս այրվել է հրդեհից, բացի մարդկային գոհերից, որ կրակը կլանեց մօտ 400 տուն, որոնց թիւում քաղաքային վարչութիւնը, հիւանդանոցը, հաշտարար դատարանը, Մալիսեանի դպրոցը, դեղատունը, թատրոնը և գրեթէ հայերի բոլոր մագաղանները: Բագուահաղար մարդիկ մնացել են առանց յարկի և առանց անդի, ինչպէս և առանց ապրուստի որ և է միջոցի. հայոց մասի ահագին հրապարակ աւերակ դարձաւ: Վնասները միլիոնների են հասնում. կոշտ արէք բոլոր բարեբաւներին, հայցելով օգնութիւն ու ինչով կարող է: Գաղաթում սարսափելի թանգութիւն է: Անմեղ գոհերին սպանում և կործանում են և առանց նրանց անմիջապէս նիւթական օգնութիւն չը հասցնվի: Մնացում են նպաստամատոյց յանձնաժողովի անունով նրա պատմներ՝ դրամով և իրերով, դիմելով Շուշի թեմական առաջնորդին և լրագրերի խմբագրութիւններին: Գաղաթում հանգստութիւն է տիրում:

Թեմական առաջնորդ՝ Առաջնորդ Սարգիսիան

Շուշի, 26 օգոստոսի:

«Վնասի (Հաղորդել) գործակալ Ա. քահ. Տէր-Ոսկանեանը գեղեցնում է, որ Պարսկաստանից Երասխի անցել են բազմաթիւ զինված թուրքեր հայերի վրա յարձակվելու համար: Ամարասի վնասնայրը գեղեցնում է, որ մենաստանը վերջնականապէս կողոպտված է. տարել են մասունքներ և սուրբ անօթները: Կրակի են մասնավոր բոլոր հայերի բնիկները: Դրութիւնը կրիտիկական է»:

Առաջնորդ Սարգիսիան

Կերեքից, օգոստոսի 26-ին, գիշերվայ 9 ժամ 46 րոպէս ստացանք հետեւեալ հեռագիրը:

«Օգոստոսի 25-ին, կէսօրից յետոյ մօտ երեք ժամին, թուրքերը, զինաւորված հրոսակախմբեր կազմած, արշաւանք գործեցին քաղաքի քրիստոնեայ մասի վրա: Ժողովուրդը սարսափի սէջ է: Հայերը թողնելով իրանց աները եկեղեցու մօտ և գաղթեցին դէպի ստորին մասը: Եկեղեցին անպաշտպան է: Ժամասացութիւնը դադարեց: Հարկաւոր է շուտափոյթ օգնութիւն»:

Առաջնորդ Սարգիսիան

## ՆԵՐՔԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԳՐԳՈՒՅԻ ՄԻ ԼՈՒՐ

Մի քանի օր առաջ «Ռուս-Հեռագրական Գործակալութիւնը» հաղորդեց մի վերին առաջնորդ գրգռիչ լուր սիւննի մահմեդականների համար: Այդ լուրի համաձայն իբր թէ հայերը Թուրքիայում այրել և կործանել էին երկու մզկիթ:

Այդ լուրը կայծակի արագութեամբ անցկացաւ Բագուի շրջը, Ձաքարթայում և Նուխիում ապրող սիւննի մահմեդականների միջով:

Դրանից պատրաստ էին օգտվելու մութ ուժերը, որոնց գերագոյն իդէալն է կոտորել, հրդեհել, կործանել ամեն տեսակ կուլտուրա, բացի առեւտրական «կոմերսիալ»:

Հայ հասարակութիւնն ապաշխարեց: Միթէ հայն ընդունակ է գնալ և կործանել ուրիշ սրբավայրը... միթէ նա կարող է արդէն սովորած, իւրացրած լինել այդպիսի վանդալական ինստինկտներ:

Ամենքը կասկածում էին: Այդ կասկածների ազդեցութեան տակ Թիֆլիսի թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Սաթուկեանը հեռագրով դիմեց Կ. Պօլսի Հայոց Պատրիարք Օրմանեան արքեպիսկոպոսին և ինչորից այդ մասին ստորի տեղեկութիւն:

Անցաւ երեկոյան պատրիարքից ստացվեց հետեւեալ հեռագիրը:

Կ. Պօլս, 25 օգոստոսի, 1 ժամ 36 ր. ցեր.: «Հեռագրայում երկու մզկիթ կործանելու լուրը պաշտօնապէս հերքված է այստեղ»:

Պատրիարք Մաղաթիւ:

Հեռագիրը պարզ է և կարուկ: Մինչև անգամ սուլթանի կառավարութիւնը պատճառաւ հերքել է այդ գրգռիչ ու ոճրագործ լուրը: Իսկ «Ռուս-Հեռագրական Գործակալութիւնը» հաղորդելով սուր շուշու, պարտք չէ համարել ամենին որ և է տեղեկութիւն տալ պաշտօնական հերքման մասին:

Ինչպէս արեւօք այդ գործակալութիւնը սիրում է գրգռիչ ու կեղծ լուրեր, ինչպէս նրա վարէնները չեն մտածում, որ նրա գործակալների մէջ կան այնպիսի հրէշաւոր չարամտութեան տէր անձեր, ինչպիսին է իր Բագուի գործակալը, որի գրգռիչ է պատկանում Շուշու մասին հաղորդված վերջին ոճրագործ լուրը:

## ՄԵՐ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԻՓՈՎ

Մեր դպրոցների բացումը առաջադրում է մեզ մի շարք այնպիսի կարևոր և անյետաձգելի հարցեր, որոնց բարեշուշող լուծումից է կախված մեր մասնակ սերնդի կրթութեան գործի առաջադիմութիւնը և լաւ հիմքերի վրա դրվելը: Մեր նախկին դպրոցների բազմաթիւ կարիքները գիտեն նրանք, որոնք մօտ են կանգնած եղել դպրոցական գործին: Մեր հասարակութիւնը ընթացքում կուլտուրական մեծ դեր են կատարել մասնաւոր գաւառներում, որտեղ մտաւոր յոյսի աւելի մեծ կարիք կայ, որտեղ դեռ ևս թանձր խաւարն է տիրապետում, սակայն նոյն այդ դպրոցները մասնաւոր գաւառներում աւելի անբարեշուշող վիճակի մէջ են եղել, հետեւապէս աւելի նեղ շափով են ծառայել իրանց նպատակին: Ներկայումս, երբ վերաբացվելու են մեր դպրոցները, երբ դպրոցական մի ամբողջ ցանց պէտք է տարածվի Գողգոթայի հայաբնակ վայրերում, ցանկալի է, որ մենք ևս աշխատենք նախօրոք հնար եղածին չափ վերացնել այն խոչընդոտները, որոնք խանգարել են կրթութեան գործին:

Շատ է չքովի այն մասին, թէ քանի որ դպրոցի զեկավարները ուսուցիչներն են, բանի որ զլիաւորապէս նրանցից է կախված ուսման գործի ամբողջ աշխուրդը, հետեւապէս դպրոցական կարիքներից առաջին տեղը բռնում է ձեռնհաս և պատրաստված



ուսուցչական դասակարգը ունենալու հարցը: Եւ քանի որ մեր մէջ ուսուցչները մատակարարող հիմնարկութիւնները մեր թիմական դպրանոցներն են, հետեւապէս անհրաժեշտ է, որ այդ հիմնարկութիւնները յարմարեցնեն ուսուցչները պատրաստելու գործին: Յայտնի է, որ մեր թիմական դպրանոցները թէկ ունեցել են նպատակ արժանաւոր քահանայացուներ և ուսուցչներ պատրաստելու, սակայն նրանք մինչև այժմ մեծ մասամբ հետու են գնդ ուսուցչները պատրաստելու գործին:

Ուսուցչի անհրաժեշտ գիտելիքներին ոչ մէկը այդ դպրոցներում չէ աւանդում, այնպէս որ յիշեալ դպրոցները աւարտող երիտասարդը, մտնելով ուսուցչական ասպարէզ և չունենալով իր պաշտօնի համար ոչ մի նախապատրաստութիւն՝ ստիպւած է ամեն ինչ անձնական փորձով սովորել, իսկ դա իդուր ժամանակ է խլում և ի դուր դանդաղեցնում է ուսման գործը: Նա ոչ մի ծանօթութիւն չունի իրան անհրաժեշտ առարկաների մասին. նա չը գիտէ ինչ է մանկավարժութիւնը, ոչ էլ նրա պատմութիւնը. դադարիստ չունի ոչ մի թօղելային և ոչ դաստիարակութիւն կոչւած ծանր և պատասխանատու գործի մասին: Մինչդեռ այդ բոլորը առաջին անհրաժեշտ գիտելիքներն են ուսուցչներին համար, ինչպէս բժշկականութիւնը բժշկի համար:

Երկրորդ՝ չէ կարելի գտնել ինչև նաև մեր թիմական դպրանոցներին ունեցած ընդհանուր կրթական զբաղմունք: Գտնի որ մեր ծխական դպրոցներին ուսուցչները մասնաւոր դասաւանդում, գիւղական համայնքներում, քահանայական դասի մեծ մասի ազդեցութեան պատճառով՝ միակ ինտելիգենտ ոյժերն են ներկայանում, հետեւապէս անհրաժեշտ է, որ ներքինը մասաւոր որոշ պաշար ունենան, ոչ միայն դպրոցական գործի անհրաժեշտութեան համար, ոչ միայն իրանց փոքրիկ սանիկներին մտաւոր աշխարհայեացքը լայնացնելու համար, այլ և հասարակութեան մէջ ևս որոշ կուրսուրակներ դեր կատարելու համար: Հետեւապէս, ժամանակ է նաև մեր թիմական դպրանոցներին հին, անպէտք ծրագիրը փոփոխել ներկայ պահանջներին համեմատ:

Երրորդ՝ ուսուցչական լուս դասակարգը ունենալու պայմաններին մինչ էլ նրանց նիւթական ապահովութեան հարցն է: Հասկանալի է, որ 300—400 բուրդի տարեկան ուժով (քիչ չէին նաև 180—240 բ. ստացող ուսուցչները), երբեք չէ կարելի գտնել զէպի այդ անպարէզը օգտակար ոյժեր: Այդ էր պատճառը, որ նորաւարտը մի երկու տարի ուսուցչութիւն անելուց, մի երկու տարւոյ փորձաւորութիւն ձեռք բերելուց յետոյ, տեսնելով որ դա ամենամանաւորով ասպարէզն է՝ աշխատելով էր, որքան կարելի է շուտով աւելի ապահով պաշարօն գտնելու և հետեւապէս ուսուցչութիւնից: Դրանով թէ փորձւած ուսուցչները չէին մնում այդ դասակարգի մէջ և թէ դպրոցները համարեա ամեն տարեի ստիպւած էին նոր ուսուցչներ որոնելու, որով անգին միայն էր ստանում դպրոցական գործը: Եւ ամենամեծ գիտնալով 10—15—20 տարեի ուսուցչութեամբ պարագայ մի փորձւած և արժանաւոր ուսուցչներին, որոնք հեռացել են այդ ասպարէզից լուի նիւթականի պատճառով: Ուսուցչին իր ստացած չնչին առճիկով ոչ միայն հնար չունէր իր դասակներին կրթութեան մասին մտածելու, այլ և հազու հազ էր իր ընտանիքի գոյութիւնը պահպանում: Այդ է պատճառը, որ մինչև չը կանոնաւորվի ուսուցչներին ուժիկ հարցը, միշտ այդ ասպարէզը կը լինի մի տեսակ «ժամանակաւոր» ասպարէզ մեր դպրանոցաւարներին համար՝ իրանց համար մի այլ պաշտօն գտնելու և երբեք չի դառնայ մշտական գործունէութեան վայր: Խօսքս, ի հարկէ, զաղափարականներին մասին չէ, դրանք միշտ եղել են և կը լինեն բացառութիւններ, որոնք անտես անելով անձնական զրկանքները՝ ծառայում են գործին: Բայց միթէ հէնց զաղափարականներին չը պէտք է նիւթականապէս ապահովելն, այլ սովորեալ, որ նրանք օր առաջ զոհ գնան զբերականներին:

Անհրաժեշտ է ոչ միայն բաւարար ուժիկ տալ ուսուցչներին, մեր ազգի կուրսուրակները գործը իրանց ուսերի վրա տանող այդ չարքաւ մշակներին, այլ և անհրաժեշտ է զեմասովի հաստատութիւններին նման պարբերաբար աւելացնել նրանց ուժիկները և մասկան զէպը բաւարար կենսաթոշակ տալ նրանց ընտանիքներին: Երբ ուսուցչին ստանայ բաւարար ուժիկ, երբ պարբերաբար այդ ուժիկը աւելանայ և ինքն էլ համոզւած լինի, որ իր մասին յետոյ ընտանիքն էլ ապահովւած է՝ ան-

կապած նա աւելի եռանդով կը կաշի ուսման գործին, ուսուցչական ասպարէզը կը գրաւէ շատ օգտակար ոյժեր և ուսման առաջադիմութեան գործը անգին օգուտ կը ստանայ:

Ներքին քահանայ

Չ ա ը թ յ .

ՆԱՄԱԿՆԵՐ ԲԱԳՈՒԻԾ

I

Օգոստոսի 22-ին  
Շուշու լուրերը այստեղ ստացվելուց յետոյ խօսում էին, թէ թուրքերը ամեն գիշեր ժողովներ են կազմում. թէ ինչ էին խօսում, ասում, ոչ ոք չը գիտէր, իսկ երբ թուրքերից հարցնում էինք, ասում էին, թէ ոչինչ չը կայ կամ լուրերը մեծ: Նոյնպէս խօսում էին թէ «Մալթիք» հիւրանոցում (նայոց եկեղեցու մօտ, Պարապետի անկիւն) գիշերները մէկ խումբ թուրքեր, մինչև 80 հոգի, զինաւորված սպասում են ազդանշանին:

Շաբաթ օրը, կէսօրից յետոյ ժամի 3-ին եւ խառնութեամբ էին: Մէկ հայ երիտասարդ խելագարի պէս ներս ընկաւ «թէ շուտ արէք խառնութիւն փակեցէք, եւ բազարից եմ գալիս»: չայլանանքը բոլորը փակ էին և խմբով թուրքերը բերաններով, սպասում են, շուտով կը յարձակվին հայերի վրա և թուրքերն էլ խառնութիւնը փակում են», ասաց և դուրս պրծաւ: Դուրս եկաւ, նայեցի, տեսայ մեր հարեան թուրքերի խառնութիւնը կիսաբաց էին, բայց նկատեցի էր, որ կառքերով թուրքերը զէպի բազարի կողմն էին գնում: Չը նայած այս չարագործակ նշաններին եւ չէի հաւատում, որովհետեւ փեսայիս զէպերից յետոյ շատ անգամ էին այսպիսի լուրեր տարածվել և մենք խառնութիւնը փակել և մէկ ժամից յետոյ բացել էինք:

Հազու մէկ ժամ էր անցել, լսվեցին հրացաններ ձայնը. դուրս նայեցի տեսնեմ մէկ քանի թուրքեր բերաններով կրակում էին հայերին, իսկ հայ երիտասարդները փոխադարձաբար բերաններով էին պատասխանում: Բարձրացաւ սարսափելի ջրօտ. մարդիկ սարսափաւոր փախչում էին ամեն կողմը: Ահա մէկ հայ ջրկիւր «Մալթիք» առաջ գլորվեց զէպի ցած սայլից. մէկ քանի թուրքեր փախչում էին զէպի բազարի կողմը, իսկ հայերը հետեւեցին կրակում էին. թուրք խառնութեանները կրակում էին հայերին, հայերից մէկ քանիսը յարձակվեցին և տեղիւնը սպանեցին նրանցից երկուսին: Մի քանի բազում 6—7 զէպներ արդէն փռված էին մեր փողոցում (Վոլիբեռնիկի փողոցը): Մենք իսկոյն փակեցինք խառնութիւն և վազեցինք հայոց եկեղեցու բազը: Այնտեղ արդէն երեք վերաւորված հայեր կային: Մենք պատասպարվել էինք եկեղեցու ետեւի կողմը: Եկեղեցու բազում երկու երեխաներ նայում էին զէպի Պարապետ. նրանցից մէկը (12 տարեկան երեխայ) յանկարծ ձիւ արձակեց և երեսի վրա ընկաւ գետնի եկեղեցու դռան առաջ: Այսպէս մինչև մէկ ժամ տեսի, երբ զինուորները և կողակները շրջապատեցին բոլոր փողոցները և սկսեցին ամեն կողմի խմբովին կրակել: Վայ ներքին, որոնք փողոցներում գնդակահարում էին միմեանց. նրանցից շատերը տապալվեցին: Մէկ քանի բազում փողոցներում, բացի զինուորներից, ոչ ոք չը կար, իսկ դուրս եկողներին զինուորները խուզարկում էին և ազատ բաց թողնում:

Չարագանց գովելի է գնեւալ Ֆադէյիկ գործունէութիւնը. մէկ ժամվայ ընթացքում բազարը ամեն փողոցները պատեցին զինուորներ և սարսափելի կոտորածի առաջն առան: Երանի կը լինէր, որ փեսայիս էլ այսպէս տուկուն և խելացի կարգադրիչ ունենայինք, հաշարաւոր անմոլ մարդկանց արեւն չէր թափվի: Երեկոյեան ժամի 9-ն էր, որ զինուորները առաջնորդութեամբ, տուն վերադարձայ (Նիկոլայեւիկի փողոց). ճանապարհին մենք տեղ զինուորների պատուհներ էին մանաւազալ, մէկ քանի անիւն առաջ միայն պահապան էլ զինների պատահեցինք: Երեկոյեան լսվում էին հաւ-հաւ և խմբովին հրացանաձգութիւններ: Երէկ, կիրակի, փողոցներում երևում էին միայն ուսաներ և ուսն ծառաներ, որոնք բազար էին գնում գալիս, նոյնպէս և թուրքեր (մեր փողոցը թուրքերի թաղումն է, մէկ կողմը բերդն է և միւսը Չէմբէրէէնը) էին հայերի երևում էին հայեր: Զարմանալի է նախ ջրկիւրների գործունէութիւնը. նրանք առաւօտեան ժամի 5-ին մինչև գիշերը տակաւններով շուր էին կրում անվախ: Երէկ երեկոյեան ժամի 7-ից նկատելի էր, թէ որ կողմից կրակում էին, զինուորները խմբովին այն կողմն էին կրակում: Այսպէս մինչև ժամի 10-ը

տեսի. բազարը կարծես պատերազմի դաշտ լինէր: Թշնամին յարձակվել էր բերդի վրա և անխնայ կերպով գնդակահար էին անում և մէկ-մէկ: Այսօր, ամիս 22-ին, երեք օր է տանը բանաւարկւած էինք: Լուր բերին թէ Չէմբէրէէնը շուր մէկ հայ սպանեցին. առաւօտեան տէլէֆօնով հարցրի և իմացայ, որ Բերե-էրեւթում ոչ մէկ թուրք կամ հայ չէ սպանւած այս երեք օրում:

Նկատելի էր, որ մի և նոյն ժամին թուրքերը ամեն կողմից սկսեցին յարձակվել: Սպանվածներին թուրք դեռ յայտնի չէ, բայց կարելի է մինչև 80 լինի, որից  $\frac{3}{4}$  մասը թուրքեր են,  $\frac{1}{4}$  մասը հայեր և ուրիշ ազգեր: Երկու օր է աշխարհից տեղեկութիւն չունենք, տանը փակված նստած ենք:

II  
Սպիտակ քաղաք, օգոստոսի 23-ին  
Ահա չորս օր է, որ մէկը միւսից աւելի քառաձիկ եղեւնագործութիւններ են տեղի ունենում: Այս նամակը գրում եմ Բագուի այն մասից, որ կոչվում է Սպիտակ քաղաք և որը անցեալ փետրվարեան օրերին ոչնչով չը տուժեց: Այս անգամ սարսափը աւելի ուժեղ է, քան անցեալ անգամը, բայց դրա փոխարէն այս անգամ մենք ինքնապաշտպանութեան աւելի միջոցներ ունենք և կուսուր ընդունակ աղամարդիկ էլ շատ ունենք:

Պաշարված լինելով չորս կողմից թուրք գնդերով, պարզ բան է, որ մեր շրջանի փոքրեթիւ հայերը պէտք է մեծ վտանգի մէջ լինեն, բայց մենք մեծ էլ վտանգութիւն ունենք կառավարութեան այս անգամվայ անաշուտութեան վրա, որը Բագուում, ինչպէս տեսնողները պատմում են, տարբերութիւն չէ դրում հայերի և թուրքերի մէջ:

Մեծ յուզում կայ այժմ Բագուի շրջակայ գիւղերում, բայց կառավարութեան ձեռք առած միջոցները և մեր խելագործութիւնը զսպում է նրանց առ այժմ: Մեր շրջանում կանանց և երեխաներին տարել ենք ձգնաւորեանի և Մանթաշեանի գործարանները, իսկ աղամարդիքս կազմ ու պատրաստ դերքերի վրա ենք:

Այս գիշեր կրակեցին հասարակական ընկերութեան նախաբանի պահեստը, որը այժմ ընդարձակվում է: Կրակի լեզուներ են երևում Բագուում, և Բերե-էրեւթում:

Թէ ինչ է լինելու գերիւնցս յետոյ, դա էլ ասպարէզի գործ է, բայց որ սրանից լուս բան չէ դուրս գալու, դրան կը վկայեն հասարակական ծովը և շատ բան տեսած երկիրքը...

Ա. Համբարձումեանց

ՆԱՄԱԿ ԱՆԷՔՍԱՆԻՐՈՊՈԼԻՑ

II

Օգոստոսի 18-ին  
Ամիս 10-ից սկսած շարունակվում են այստեղ Ալեքսանդրօպոլի գաւառի ուսուցչական ժողովի հերթական նիստերը պ. Ս. Տիգրանեանի նախագահութեամբ:

Ժողովի զբաղմունքները գլխաւոր նիւթը կազմում է պ. Յ. Միրքեանի մշակած դեկուցումը դպրոցական կանոնադրութեան և ծրագրի մասին (վերջինիս բարեփոխված ձեւերը հեղինակը շուտով ստանալու է արտասահմանից), որը նա առաջարկում է, հաւանութեան զէպը, ներմուծելու գաւառական պատգամաւորութեան միջոցով Թիֆլիսի կենտրոնական յանձնաժողովի մշակելիք կանոնադրութեան և ծրագրի մէջ:

Գնեւիկը կանոնադրութիւնը (պ. Միրքեանի), որ համակված է գրեթէ աշխարհիկ դպրոցներին յատուկ դեմօկրատիկ ոգով, ներկայացնում է դպրոցական սահմանադրութեան մի նոր սխաւած, որի հիմնաքարը կազմում է ծուրը, ժողովուրդը: Ծխական դպրոցը, ինչպէս անունն է ցոյց տալիս, բուն ժողովրդական մի հիմնարկութիւն է, շաղկապված ժողովրդի կենսունակ պահանջներին հետ: Հետեւաբար ժխտել ժողովրդական իրաւաստիութեանը և մասնակցութեանը դպրոցի ընթացիկ կեանքի նկատմամբ, նշանակում է քանդել ժողովրդի և դպրոցի մէջ եղած արամարանական օղակը, յարաբերական հասկացողութիւնը: Եթէ ժողովուրդը հոգում է մի դպրոցի համար նիւթական միջոցները մատակարարութիւնը, հաւատարմով նրան իր մատաղ սերունդը, նշանակում է նա լրակատար իրաւունք ունի միջամտելու իր նպատակներով հայթայթվող դպրոցի ընթացիկ գործաւարութեան մէջ: Այս պատճառով բոլորովին անհիմն է ժողովականներից մի քանիսի կարծիքը՝ թէ դպրոցի իսկական շահը պահանջում է մեկուսացնել ժողովրդի անգիտակ մասնակցութիւնը և թողնել գործի տեղը զեկավար-

ութիւնը ուսուցչական դասակ ու ձեռնհաս դասակարգին: Ընդհակառակը, այդ զէպը ուղղորդական շահը՝ փոխանակ շահիկն ու պէտք է ապագայում ընդհարվի մի կատարական դասակարգի, որը դարձնելով կասկածելի դպրոցական գործի ապագայ աշողութիւնը, պէտք է ստեղծէ մի այնպիսի լայն վիճիւր և ժողովրդի միջև, որպիսին անկարող է միացնել որ և է արհեստական կամուրջ: Հէնց այս տեսակետից է, որ ներկայ ուսուցչական ժողովի մեծամասնութիւնը ընդունում է նոր կանոնադրութեան կէտերը, հիմնված միայն ժողովրդական ընտրողական համակրելի սկզբունքի վրա:

Հոգաբարձութիւնը և մանկավարժական խորհուրդը, ընտրված ժողովրդական սկզբունքներով, պէտք է գործեն համեմատ, ընդունեն և արձակեն ուսուցչներ (և տեսուչներ) փոխադարձ համաձայնութեամբ: Եթէ հոգաբարձութիւնը (լինի նոյն իսկ փոքրամասնութիւն) ամբողջ կազմով դէմ է որեւէ ուսուցչի, վերջինս չպէտք է մնայ դպրոցում հէնց նոյն դպրոցի շահին համար: Իսկ եթէ այդ առիթով առաջ են գալիս տարաձայնութիւններ հոգաբարձութեան և մանկավարժական խորհրդի մէջ, այն ժամանակ հարցը լուծվում է ձայների բազմութեամբ, առանց վիճակային խորհրդի միջամտութեան (որին պատկանում է միայն veto-ի իրաւունքը), ընտրելով ուսուցչներից հոգաբարձութեան հաւասար թվով պատգամաւորներ<sup>\*)</sup>:

Բացի դրանից, ուսուցչական ժողովը որոշել է սահմանափակել տեսչի անհատական սահմանափակութիւնը դպրոցի բազմը տնօրէնելու իրաւաստեան մարդ: Տեսուչը այլ ևս իրաւունք չունի ուսուցչի արձակելու կամ ընդունելու, առանց մանկավարժական ժողովի և հոգաբարձութեան գիտութեան: Նրան աւելում են միայն հետեւեալ 3 ֆունկցիաները՝ 1) տեսուչը իբրեւ ներկայացուցիչ դպրոցի արտաքին հանգամանքներում, 2) տեսուչը իբրեւ նախագահ մանկավարժական խորհրդի և 3) տեսուչը իբրեւ վերահսուող:

Տեսուչը իր նկատած մտաթիկական թերութիւնները առաջարկում է մանկավարժական ժողովին քննութեամբ և հաւաքական ոյժերով կազմակերպում է փորձական դասերը, անձամբ ցոյց տալով օրինակելի դասաւարտութեան եղանակը: Տեսուչը նոյնիսկ իրաւունք չունի մասնաւոր կերպով նկատողութիւններ անելու ուսուցչին: Այս տեսակետից տեսչի գիտողութեանը, անձնական ընաւորութիւնից դեմ պահելու համար, տրվում է կողմնակի և, այսինքն մանկավարժական ժողովը կարող է չը յանձնել գիտողութիւնը միայն տեսչին, այլ յանձնարարել իւրաքանչիւր ուսուցչի այցելելու տեսչի հետ կամ առանձին ընկերով դասերը և հետեւանքներ մասին զեկուցանելու ժողովին:

Այսպիսով ուրեմն, ուսուցչին վերջապէս տալով և տեսչական կամայականութիւններին, որը կը բարձրացնէ անշուշտ նրա աշընձ սեփական արժանաւորութեան գիտակցութիւնը:

Ս. Իսահակեան.

ՆԵՐՔԻՆԻ ԼՈՒՐԵՐ

Շուշու ֆրասված հայերի օգտին ստացանք արիւնի Տիրուհի Վարդապետեանից 3 բ.:

Երէկ, օգոստոսի 26-ին, տեղի ունեցաւ Թիֆլիսում առաջին ժողովը զեմասկային հիմնարկութիւնները մտցնելու գործի առիթով: Գաւառական ազնուականութեան պարագլուխ իշխան Սուքասովը հրաւիրել էր վրաց Ազնուականութեան թաւաճիչ շինութեան մէջ, Թիֆլիսի գաւառի հոգաւորներին ընտրելու իրանց միջոց ներկայացուցչները գաւառական այն խորհրդակցութեան համար, որ պէտք է ընէ և մշակէ ապագայ ինքնավարութեան ծրագիրը: Ընտրվեցին տասնութ հոգի, որոնք կը ժողովին երեք օրից յետոյ, այն է օգոստոսի 30-ին, խորհրդակցական ժողովի:

Իշխան Ջանդիբեկին, Երևանի նոր նշանակված փոխ-նահանգապետը գնացել է Նախիչևան և օգոստոսի 21—23-ին ժողովներ է կազմել հայերից ու թուրքերից: Իշխանը ջանացել է հաւաքեցնել այդ երկու ժողովուրդներին, բայց հայերը յայտնել են, որ պահանջում են իրանց ֆրանսերը և միմիայն այդ պայմանով կարող են հաշտվել թուրքերի հետ: Լաւ բան է. մարդկանց զրկում են ունեցած-չունեցածից:

\*) Այն ժամանակ երբ 3 տարով ընտրուած հոգաբարձական կազմը մնում է նոյնը, ուսուցչական պարագլուխը կերպով աւելանում է (բացի գիւղերից):







յետ կը մղեն Եւրոպայի և Ամերիկայի առեւտրական վաճառանոցները: Եւրոպայիցները կը շարունակեն 2-րդ անգամ Եւրոպայի և Ամերիկայի միջև, որ սակայն ազգերը պէտք է միասին դնեն իրենց անհատական անհատական համարը:

ԿՕՊԵԼԵՆԴԵՆ, 25 օգոստոսի: Վաղը, Դաւիթյան օրէնքի ոյժ է ստանում նոր օրէնքը մարմնական պատժի մասին: Այդ պատժին ենթարկուած են երկու սեռի մեղաւորները 18-ից մինչև 55 տարեկան:

ՏՕԿԻՕ, 25 օգոստոսի: Անկարգութիւնները վերջացան: Երէկ երեկոյեան սպանվեցին 2 և վերադարձուցին 500 հոգի: Կայսերական հրամանով հրատարակված է վերադարձուցնելու հրով: Տօկիոյում անկարգութիւնները սկսվեցին այսօր երեկոյեան: Ամբողջ այրեց և ոչնչացրեց 10 ըրիտանդնական եկեղեցի:

ՆԻՒԵՐՈՒՄ, 25 օգոստոսի: Երբ Կոմունարն ստացաւ հետագիր Տօկիոյից անկարգութիւններին մասին, նա անմիջապէս ցանկացաւ տեսակցել Րուզվելտի հետ:

ՊՐՏՄԱՆՈՒՄ, 25 օգոստոսի: Կոմունարն նշանակեց 10,000 զօրք Նիւ-Հեմփշի նահանգի բարեկարգական հաստատութիւններին, արտադրութեանը դրանով էր երախտագրութիւնը իրան և էր ընկերներին ցոյց տուած ուշադրութեան համար:

ՇԱՆԻՔԱՅ: Սոսկալի ջրեղեղը աւերեց ամբողջ գաւառը: Մարդկային զոհերի թիւը 6000 են հաշուում:

ԼԻՍՍԱԲՈՒՄ: Սառսիկ ցիկլոնը անցաւ ամբողջ Պորտուգալիայի վրայով սոսկալի աղէտներ պատճառելով: Շատ նաւեր փչացան, կորուսաները անհաշիւ են:

Կ. ՊՕԼԻՍ, 25 օգոստոսի: Ամերիկական դեսպանը ուղարկուած են երեկոյեան Բ. Դրան պահանջելով յանձնել իրան ամերիկացի առեւտրականին հայրին, որին օսմանեան դատարանը մահապատիւ է դատապարտել մի թիւրքացի սպանութեան համար:

ՕՐԵՈԼ, 25 օգոստոսի: Երեկոյեան անցաւ արագ Եւրոպայի:

Կ. ՊՕԼԻՍ, 25 օգոստոսի: Այժմ յայտնվեց, որ Արքիմանդիտի հրդեհի մեղաւորները, որք ծագումը առաջ վերադարձու էին բոլորներին հանդիմանում են հայ յեղափոխականները, որոնք դրժում էին բոլորներին հետ միասին: Կայսերական զինուորը և մի հայ, նրանք յայտնեցին, որ պատկանում են այն 200 դաւադիրների թիւին, որոնք որդեղ են պայթեցնել Արքիմանդիտը և յետոյ Զմիւռնիքի և Սալոնիկի: Միջազգային աստիճանական յանձնաժողովը որոշեց հաստատել թշուառական հանդուրժեան ասանանալիսով Ռուսաստանից և Գերմանիայից եկողներին վրա: Ենթադրում են, որ թշուառական հանդուրժեանը հաստատված է աւելի նրա համար, որ ստիպանութիւնը հնարաւորութիւն ունենայ հսկել անդրաշխանականներին վրա:

ՆԱԶԱԳԻՐ՝ ԱՆԷՔՍԱՆԻՐ ՔԱՆԱԹԱՐ Հրատարակչին՝ ԲԱԳՈՒՆԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ ԻՍՏԱՆԻ ՄԵԼԻՔԱՆԱՐԱՆԱՆ

ԵԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ե Ր Կ Ս Ք Ո Ւ Զ Ի

(Ժամերը նշանակված են Գեաղարդի հաշուով. իսկ Թիֆլիսից 58 րոպէ կամ մի ժամ աւելի ուշ պէտք է հաշուել):

|                        | Գոսպ. | Մարտ. | Արաք. | Ապր.   |
|------------------------|-------|-------|-------|--------|
| Բազմութիւնը դուրս գալը | 4.33  | 12.58 | 1.18  | 5.10   |
| Թիֆլիսի հասնելը        | 10.43 | առ.   | 5.51  | 2.22   |
| Թիֆլիսից դուրս գալը    | 11.28 | 6.39  | 10... | 6.58   |
| (Թիֆլիսի ժամանակով)    | 12.26 | 7.37  | 10.58 | 7.48   |
| Բաթումի հասնելը        | 12.31 | 7. 8  | 8.16  | 12.42  |
| Բաթումից դուրս գալը    | 5.55  | 10. 9 | 9.33  |        |
| Թիֆլիսի հասնելը        | 6.29  | 10.33 | 7.39  |        |
| Թիֆլիսից դուրս գալը    | 7.29  | 11.13 | 4.59  |        |
| (Թիֆլիսի ժամանակով)    | 8.27  | 12.11 | 5.57  |        |
| Բազում հասնելը         | 1...  | 4.59  | 5.46  |        |
| Երևանից դուրս գալը     | 12.25 |       |       | 9.40   |
| Կարսից »               | 4.12  |       |       | 1.17   |
| Ալեքսանդրօպոլ »        | 7.50  |       |       | 5.26   |
| Թիֆլիսի հասնելը »      | 5.24  | առ.   |       | 3.28   |
| Թիֆլիսից դուրս գալը    | 11.50 | գիշ.  |       | 2.50   |
| (Թիֆլիսի ժամանակով)    | 42.48 | գիշ.  |       | 3.48   |
| Ալեքսանդրօպոլ »        | 10.50 |       |       | 2.44   |
| Կարսի հասնելը          | 2.20  |       |       | 6. առ. |
| Թիֆլիս »               | 4.48  |       |       | 8.52   |

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ  
Գ. Ա. ՀԱՆՎԵՐԴԵԱՆ

Մասնագէտ միջոցին և միջոցառողական հիւանդութիւններին, ընդունում է հիւանդներին առաւելու 12 Ժ.—1 Ժ, երեկոյեան 6 Ժ.—9 Ժ.: Կուլիկա, Սեւեռօսկայի փ. № 20. (Կ. Կ. Զ. Կ.) 6—30

Ա Տ Ա Մ Ն Ա Ր Ո Յ Ժ  
Ս. Գ. ՇԵՐԻՆԱՎԱՆԻԱՆ

Ընդունում է հիւանդներին ամեն օր առաւելու անոց 9—2 և երեկոյեան 3—6, Երևանեան հրապարակ, առան Արդարութեան, բնակարան Լալայանցի բնակարան:

Հրատարակիչ Անդրեասով

Բացված է չորս ամսվայ բաժանորդագրութիւն սեպտեմբերից մինչև տարվայ վերջը: 1905 թ. Թիֆլիսում տալիս է ամսվայ ընթացքում չորս գրքոյի զանազան վերնագիրներով, յայտնի հեղինակների ինքնուրոյն գրութեանը և թարգմանութիւններ: Չորս գրքոյից պէտք է բաղկացած լինի 100 ից մինչև 120 երեսից: Մեծագիր: Չորս ամսվայ բաժանորդագրին է մէկ րուրի ճանապարհածախսով:

Հասցէն. Тифлисть, ул. Броссе № 5. КНИГО-издатель А. А. Ованесянцъ.

Թիֆլիսում բաժանորդ գրվել ցանկացողները կարող են դիմել Դժոքօվայա փողոց, առան Մոմկանովի, գրասենեակ № 17. 1—2

Հրատարակութիւն «ԳՈՐԾ»-ի

Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի Ի. Բեյոկոսկու

ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

ԵՒ ԶԵՄՍՏՎՈ

Թարգմ. Յ. Թադէոսեանի

Գիրքը 8 կօպ. 1—3

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

Լ Ե Օ

ՄԵԼԻՔԻ

ԱՂԶԻԿԸ

Պատմական վեպ

ԳԻՐԸ 1 ԲՈՒՐԸ 50 ԿՕՊԵԿ:

Մամուլում է 1) հեղինակի մօտ, «Մշակի» խմբագրատանը, 2) Թիֆլիսի գրավաճառանոցներում:

Գրավաճառանոցները և գումարով գնողները գիրքում կը ստանան, եթէ դիմեն ուղղակի հեղինակին:

Զ Ո Ւ Թ Ա Կ Ա Ն Ա Ր

Մ. Տ. Վասիլեվ

Առաջարկում է տալ դասեր Ղուծակ անհիւ 90 ր. վարձատրութեամբ ուսումնական տարվայ համար (վարձը կէս տարով), ամսական 14 րուրով: Ուսման սկիզբը սեպտեմբերի 1-ից և վերջը յունիսի 1-ին: Աշակերտների ընդունութիւնը օգոստոսի 27-ից ամենայն օր ժամը 10—1 և 5—7<sup>1</sup>/<sub>2</sub> երեկոյեան: Միասին անհիւ և դասեր անհիւում փոխադարձ համաձայնութեամբ: Գրեթե օրօվայա փողոց, № 5: (օգ. 21, 25, 27, 28, 30 և 31, սեպտ. 1, 2, 4, և 5) 3—10

Ս. Վ. ԱՐԴՈՒԹԵԱՆ-ԵՐԿԱՅԵԱՆԱԶՈՒԿԻ

Դպրոց-Պանսիօնը եւ

Մանկական Պարտէզը

Տեղափոխվում է Սոլոյակ

Պատկերվել փող. № 9, առան Տէր-Ասատուրեանի, նախկին III իգական գիմնազիային կից:

Երեկոյեան ընդունելութիւնը օգոստոսի 27-ից:

Գրադուռներն սկսվում են սեպտեմբերի 7-ից:

(Կ. Զ. Կ.) 2—3

Հարկաւոր է մի

Հ Ա Յ Օ Ր Ի Ո Ր Դ

Կամ տիկին տնային վարժուհու պաշտօն ստանձնելու համար: Դիմել իրի. Մ. Թուրանեանին: Բարեատնական փող. № 8. 2—2

Աւերաբաղի եկեղեցական-ծխական երկսեռ ուսումնարանի ա. և բ. բաժանումները համար հարկաւոր է

ՄԻ ՃԵՄԱՐԱՆԱԽԱՐՏ

ուսուցիչ հայոց լեզուի և թուրքական լեզուի 20—22 դասով, 600 րուրի ուղ, ճիւղով, պատրաստի բնակարանով, վառարանով և լուսանկարութիւնով: Ծանկացողները թող դիմեն Ասխաբադ Զակասիյե. օբլ. Էտյորս արմյանսկոյ քերքի Իւան Մալախով. 2—3

ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Հայերէնի դասագիրք հեղինակների կենսագրութիւններով:

Գիրքն է 1 ր., գումարով անոդներին 20—50% զիջում. դիմել Թիֆլիս Կոմերցի. ուսմ. Վանթան. կամ գրավաճառներին (ա. օ) 3—16

Լ Ո յ ա տ ե ս ա լ

ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԵՄՍՏՎՈ

Ի. Բեյոկոսկու

Թարգմ. Կ. Զալալեանի:

Գիրքն է 15 կ. ճանապարհածախսով 17 կօպ., գումարով գնողներին բաւարար զեղջով:

Դիմել Թիֆլիս, ԿՈՆԵՐՆԱԿԱՆ ԿՈՆԵՐՆԱԿԱՆ «Գր-տեմբեր».

Հ Ր Ա Ի Է Ր

Նորին Բարձր Սրբազանութիւն Թեմակալ առաջնորդի հրամանով Տափի-Թաղի ա. Գէորգ եկեղեցու մեծապատիւ պ. պ. ծխականներին հրաւիրում է մ. ընդհանուր ժողովի, որ կայանաւոր է վիճակ. Կոնստանտնուպոլիսի քաղաքում կիրակի օրը, օգոստոսի 28-ին, ցերեկվայ ժամը 11-ին: Ընտրելու երկու հոգաբարձու բացվել է եկեղեցական-ծխական դպրոցի համար:

Միաւր Տափի-Թաղի ա. Գէորգ եկեղեցու Յովսէփ Բ. Տէր-Գեորգիան

Հ Ր Ա Ի Է Ր

Նորին Բարձր Սրբազան առաջնորդի կարգադրութեան համաձայն, կիրակի, օգոստոսի 28-ին, ա. պատարագից յետոյ, Թիֆ. Զգրաւէն ա. Աւետեաց եկեղեցու պ. պ. ծխականներին հրաւիրում են նոյն եկեղեցի, մասնակցելու ընդհանուր ծխական ժողովին՝ ընտրելու երկու հոգաբարձուներ նոյն եկեղեցու ծխական ուսումնարանի համար:

Գէորգ առաջ քաւ. Արուսեանց Երեցփոխ Ալեքսան Գալանթարեանց (Կ. Կ.) 1—2

Հ Ր Ա Ի Է Ր

Մոդոյն ա. Գէորգ եկեղեցու հայոց ծխականները հրաւիրվում են նոյն եկեղեցում բարձր սրբազան առաջնորդի հրամանով ընտրելու երկու հոգաբարձու: Դրանիս համար ծխական ուսումնարանի համար, կիրակի, օգոստոսի 28-ին, առաւելու 12 ժամին:

Գրեգոր ա. Բ. Տէր-Բարսեղեանց 1—2

Հ Ր Ա Ի Է Ր

Վրաստանի և Իմերէթի վիճակաւոր տէր Առաջնորդի հրամանին համաձայն, պատիւ ունեն հրաւիրել Հաւաքարի Շամբուցոյ ա. Աստուածածին եկեղեցու ծխականներին, որ ամսիս 28-ին, կիրակի, առաւելու 11-ին ընտրեն բերել յիշեալ եկեղեցին, ծուխից երկու անգամ հոգաբարձու ընտրելու, նոյն եկեղեցու գաւթում գտնվող հայոց ծխական ուսումնարանի համար:

Համազասպ ա. Բ. Տէր-Յովհաննիսեանց (Կ. Կ.) 2—2

Վրաստանի և Իմերէթի թեմակալ առաջնորդ Զեքարիայի Դարեգին արքեպիսկոպոսի հրամանով, ինչպէս և Գոլիկայի նորաջէն ա. Աստուածածին եկեղեցու պ. պ. ծխականներին ամսիս 28-ին, կիրակի օրը 12 ժամին ընտրեն բերել յիշեալ եկեղեցին Կոկիայի դպրոցի համար հոգաբարձուներ ընտրելու:

Միաւր Ալեք. քաւ. Տէր. Յովհաննիսեան (Կ. Կ.) 2—2

Յ. Դ Ս Ղ Ր Ա Շ Ե Ն Ա Ի

ԼԻԱԿԱՍԱՐ ԲԱՌԱՐԱՆ

ուսուցիչից հայերէն

Լոյս տեսաւ ՈՒԹԵՐՈՐԴ արատեսաւ

Գիրքն է 1 ր. 20 կօպ.

Ամբողջ բառարանի բաժանորդագրին է 7 ր., ճանապարհածախսով 8 րուրի, փառակազմ 9 ր.: Հեղինակին դիմողները ցանկապահաւաստ չեն վճարում Դիմել հեղինակին հետեալ պարզ հասցեով. Թիֆլիս, Ա. Շ. Դաքաթյան. Թիֆլիսում բաժանորդ կարելի է գրվել «Դուստներէր» գրախանութիւն:

ՀԻՍՏԱՐԱՐ ԲԱՌԱՐԱՆ

հայերէնից ուսուցիչ

Լոյս տեսաւ ԱՌԱՋԻՆ արաւիկ, Գիրքն է 1 ր., Ամբողջ բառարանի բաժանորդներին 5 ր., առաջին բառարանի բաժանորդներին համար 4 ր. Գրքանի բառարան ուսուցիչից հայերէն:

Բաժանորդագրին է 2 ր. 50 կ.: Գիրքն հեղինակին վերոյիշեալ հասցեով: (Կ. Կ.) 2—2

ՀԻՍՏԱՐԱՐ ԲԱՌԱՐԱՆ

հայերէնից ուսուցիչ

Լոյս տեսաւ ԱՌԱՋԻՆ արաւիկ, Գիրքն է 1 ր., Ամբողջ բառարանի բաժանորդներին 5 ր., առաջին բառարանի բաժանորդներին համար 4 ր. Գրքանի բառարան ուսուցիչից հայերէն:

Բաժանորդագրին է 2 ր. 50 կ.: Գիրքն հեղինակին վերոյիշեալ հասցեով: (Կ. Կ.) 2—2

ՀԻՍՏԱՐԱՐ ԲԱՌԱՐԱՆ

հայերէնից ուսուցիչ

Լոյս տեսաւ ԱՌԱՋԻՆ արաւիկ, Գիրքն է 1 ր., Ամբողջ բառարանի բաժանորդներին 5 ր., առաջին բառարանի բաժանորդներին համար 4 ր. Գրքանի բառարան ուսուցիչից հայերէն:

Բաժանորդագրին է 2 ր. 50 կ.: Գիրքն հեղինակին վերոյիշեալ հասցեով: (Կ. Կ.) 2—2

ՀԻՍՏԱՐԱՐ ԲԱՌԱՐԱՆ

հայերէնից ուսուցիչ

Լոյս տեսաւ ԱՌԱՋԻՆ արաւիկ, Գիրքն է 1 ր., Ամբողջ բառարանի բաժանորդներին 5 ր., առաջին բառարանի բաժանորդներին համար 4 ր. Գրքանի բառարան ուսուցիչից հայերէն:

Բաժանորդագրին է 2 ր. 50 կ.: Գիրքն հեղինակին վերոյիշեալ հասցեով: (Կ. Կ.) 2—2

ՀԻՍՏԱՐԱՐ ԲԱՌԱՐԱՆ

հայերէնից ուսուցիչ

Լոյս տեսաւ ԱՌԱՋԻՆ արաւիկ, Գիրքն է 1 ր., Ամբողջ բառարանի բաժանորդներին 5 ր., առաջին բառարանի բաժանորդներին համար 4 ր. Գրքանի բառարան ուսուցիչից հայերէն:

Բաժանորդագրին է 2 ր. 50 կ.: Գիրքն հեղինակին վերոյիշեալ հասցեով: (Կ. Կ.) 2—2

ՀԻՍՏԱՐԱՐ ԲԱՌԱՐԱՆ

հայերէնից ուսուցիչ

Լոյս տեսաւ ԱՌԱՋԻՆ արաւիկ, Գիրքն է 1 ր., Ամբողջ բառարանի բաժանորդներին 5 ր., առաջին բառարանի բաժանորդներին համար 4 ր. Գրքանի բառարան ուսուցիչից հայերէն:

Բաժանորդագրին է 2 ր. 50 կ.: Գիրքն հեղինակին վերոյիշեալ հասցեով: (Կ. Կ.) 2—2

ՀԻՍՏԱՐԱՐ ԲԱՌԱՐԱՆ

հայերէնից ուսուցիչ

Լոյս տեսաւ ԱՌԱՋԻՆ արաւիկ, Գիրքն է 1 ր., Ամբողջ բառարանի բաժանորդներին 5 ր., առաջին բառարանի բաժանորդներին համար 4 ր. Գրքանի բառարան ուսուցիչից հայերէն:

Բաժանորդագրին է 2 ր. 50 կ.: Գիրքն հեղինակին վերոյիշեալ հասցեով: (Կ. Կ.) 2—2

ՀԻՍՏԱՐԱՐ ԲԱՌԱՐԱՆ

հայերէնից ուսուցիչ

Լոյս տեսաւ ԱՌԱՋԻՆ արաւիկ, Գիրքն է 1 ր., Ամբողջ բառարանի բաժանորդներին 5 ր., առաջին բառարանի բաժանորդներին համար 4 ր. Գրքանի բառարան ուսուցիչից հայերէն:

Բաժանորդագրին է 2 ր. 50 կ.: Գիրքն հեղինակին վերոյիշեալ հասցեով: (Կ. Կ.) 2—2</